



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՅԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



**ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԸ ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԸ ՏՕՆԵՑ
 ՏՈՐՄԻԿ ԵՒ ՋԵՐՄ ՄԹՆՈԼՈՐՏԻ ՄԷՋ**

ԱԶԳ. ԲԱՐԵՐԱՐ ՏԻԿԻՆ ԱՇԽԷՆ ՓԻԼԱՎՃԵԱՆ ՀԻՄՆԵՆԿԱԼԵՑ ԾԱՇԿԵՐՈՅԹԸ

Բուն Բարեկենդանը Հայց. Առաքելական Եկեղեցւոյ տօնացոյցին մէջ, ու հայ ժողովուրդի ազգային եկեղեցական կեանքէն ներս, իրայատուկ տօն մըն է եւ կը նշուի Մեծ Պահոց նախօրեակին: Ըստ հայկական հնամենի մեր ավանդութեանց, Բարեկենդանը կամ Բարեկենտանքը ուրախութեան, խրախճանքի, ճոխ եւ առատ ուտելիքներով վայելելու օր է, զուարթ պահ մը կը շնորհէ տօնախմբողներուն եւ առիթ կ'ընծայէ վայելելու տոհմիկ ճաշատեսակներ, եւ զուարճանալու ընկերային հաճելի մթնոլորտի մէջ հաւաքական հանդիսութիւններով ու այլազան զուարթառիթ միջոցառումներով:

Արեւմտեան մեր Թեմի տարիներու ավանդութեան համաձայն, այս տարի եւս, Բարեկենդանի տօնին առիթով կազմակերպուած էր հաճելի երեկոյ մը, հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր՝ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Սարսիրոսեանի եւ կազմակերպութեամբ Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինին: Ինչպէս նախընթաց տարիներուն, այս տարի եւս, ազգային բարերար Տիկին ԱշխԷՆ Փիլավճեան ազնուաբար հիւրընկալեց ճաշկերոյթը:

Խրախճանական բնոյթով երեկոն տեղի ունեցաւ Կիրակի, 18 Փետրուար 2007ի երեկոյեան ժամը 5ին, Ս. Նահատակաց եկեղեցւոյ կից «Աւետիսեան» սրահին մէջ: Մասնակից եղան շուրջ 450 հանդիսականներ: Ներկայ էին Թեմիս հոգեւորականաց դասու անդամներ, Ազգային Վարչութեան անդամներ, հոգաբարձական եւ երեսփոխանական ժողովի անդամներ, ծխական շրջաններու տիկնանց, երիտասարդաց, դպրաց դասերու եւ կիրակնօրեայ վարժարաններու ներկայացուցիչներ եւ Ազգ. Առաջնորդարանի բարերարներ ու բարեկամներ:

Մշակուած էր կոկիկ յայտագիր մը: Հանդիսավարութիւնը վստահուած էր Ազգ. Առաջնորդարանի անձնակազմի անդամներէն Տիկին Զնար Գորթոշեանի, որ ձեռնհասօրէն կատարեց հանդիսավարի պարտականութիւնը: Ան ամփոփ գիծերու մէջ ներկայացուց Բարեկենդանի բնոյթը եւ տօնին իմաստը, յիշեցնելով թէ այս զուարթ տօնը միայն հայերուս իւրայատուկ չէ, այլ կը պատկանի քրիստոնէական բոլոր եկեղեցիներուն, եւրոպական կամ արեւմտեան ժողովուրդներու լեզուին մէջ կը կոչուի *Քարնաւալ* կամ *Մարտի-Կրայ*, եւ այս առիթու կը կազմակերպուին հետաքրքրական տողանցքներ, ժողովրդային պարեր եւ դիմակահանդէսներ: Ան վեր առաւ նմանօրինակ տօներու ժողովրդականացման մէջ Ազգ. Առաջնորդարանին

դերը, ապա հրաւիրեց Առաջնորդ Սրբազանն ու հոգեւոր հայրերը, որպէսզի աղօթքով կատարեն երեկոյթին բացումը:

Աղօթքէն ետք, Տիկնանց Օժանդակ Մարմինին անունով բարի գալուստի խօսք արտասանեց Տիկին Սալբի Սրուբեան:

Օրուան խօսքը փոխանցեց Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան Գրասենեակի Վարիչներէն՝ Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան, որ կենդանի եւ հաղորդական ոճով անդրադարձաւ Բարեկենդանի աստուածաշնչական եւ ժողովրդային իմաստներուն, դիմակաւորուելու ասանդութեան, ինչպէս նաեւ բարեկենդանական գաւառական ասանդութիւններէն յիշեց *Մորմորոտը*, որ կազմուած կ'ըլլար խոշոր սոխի մը գլուխով, անոր վրայ շրջանակաձեւ միւրճուած կ'ըլլային եօթը գունազարդ փետուրներ: Եօթը փետուրները Մեծ Պահոց եօթը շաբաթները կը ներկայացնէին, եւ իւրաքանչիւր Կիրակի, եկեղեցիէն վերադարձին, փետուր մը սոխէն դուրս կը քաշէին:

Ազգ. Առաջնորդարանի մանկապատանեկան նորակազմ երգչախումբը, առաջնորդութեամբ եւ ղեկավարութեամբ Զրիստոնեական Դաստիարակութեան Գրասենեակի Վարիչներէն Յոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեանի, իր անդրանիկ ելոյթը ունեցաւ այս ձեռնարկին: Երգչախումբը սքանչելիօրէն ներկայացուց հայրենասիրական ու մանկական զուարթ երգեր:

Այնուհետեւ, հանդիսավարը հրաւիրեց Առաջնորդ Սրբազանը, որպէսզի ուղղէ իր պատգամը: Առաջնորդ Սրբազանը առաջին հերթին շնորհակալութեան խօսք ուղղեց Տիկին Ա. Փիլաւճեանին, »որ իր կարգին գեղեցիկ ասանդութեան մը վերածած է այս ձեռնարկին հիւրընկալումը«, ապա նաեւ՝ գնահատեց բոլոր ներկաները, որոնք կը գօրակցին Ազգ. Առաջնորդարանիս ու մասնակից կ'ըլլան նմանօրինակ ձեռնարկներու յաջողութեան: Ան բարձր գնահատեց Ազգ. Առաջնորդարանի նորակազմ մանկապատանեկան երգչախումբը, եւ կոչ ուղղեց ծնողներուն, որ իրենց զաւակները անդամագրեն երգչախումբին, որպէսզի հայ երգը մանկանայ ու անմահ մնայ մանուկներու շրթներուն վրայ: Վերջապէս, Առաջնորդ Սրբազանը մաղթեց, որ յառաջիկայ շաբաթներուն պահեցողութեան դիմող հաւատացեալներուն ուխտը ընդունելի ըլլայ Աստուծոյ մօտ:

Պաշտօնական բաժնէն ետք մատակարարուեցաւ ճաշը: Ապա, երեկոն խանդավառեց ճորճ Պաղտոյեան: Ներկաներու ուրախ տրամադրութիւնը, ստեղծուած ընտանեկան մթնոլորտը եւ շուրջպարերու խանդավառ շղթան հարազատ արտայայտութիւնն էին Բարեկենդանի մթնոլորտին:

Աւելի քան երեք ժամ հայկական տոհմիկ ու մտերմիկ մթնոլորտ մը վայելելէ ետք, ներկաները տուն վերադարձան հայկականութեամբ վերալիցքաւորուած:

WESTERN PRELACY CELEBRATES PAREGENTAN

BENEFACTOR MRS. ASHKHEN PILAVJIAN HOSTED THE BANQUET

Each year, on the eve of Great Lent, the Western Prelacy extended family comes together to celebrate Paregentan in a warm and festive atmosphere. This year, the Paregentan banquet took place on the evening of Sunday, February 18th, at “Avedissian” Hall of Holy Martyrs Church in Encino. The event, held under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, was organized by the Prelacy Ladies Auxiliary Guild and hosted by Mrs. Ashkhen Pilavjian. Among those in

attendance were members of clergy, Executive Council, delegates, board of trustees, and close to 450 donors and friends.

The official portion of the program began with M.C. Mrs. Knar Kortoshian briefly presenting the meaning and nature of Paregentan celebrations, and subsequently inviting the Prelate and clergy members to offer the opening prayer. Mrs. Salpi Srourian then welcomed the guests on behalf of the Ladies Auxiliary.

The evening's speaker was Christian Education Department Co-Director Very Rev. Fr. Muron Aznikian, who spoke on the spiritual and popular meaning of Paregentan and explained the many traditions associated with the feast.

During the banquet, the newly formed Prelacy youth choir, guided by Very Rev. Fr. Barthev Gulumian, beautifully performed a set of national and children's songs.

The official program concluded with the Prelate's remarks who first thanked Mrs. Pilavjian for hosting the banquet year after year, and then thanked the guests for contributing to the success of the event each year. He also commended the youth choir and urged parents to sign up their children.

The festivities then began with the serving of dinner and entertainment by George Baghdoian.

This email is broadcasted by [Western Prelacy of the Armenian Church of America](http://www.westernprelacy.org) - 6252 Honolulu Ave, La Crescenta, CA 91214 - USA. If you have any questions or comments, please do not hesitate to call us at (818) 248-7737 or send us your request by email to info@westernprelacy.org. Visit our Website www.westernprelacy.org Copyright . 2007 All rights reserved.

If you wish to be removed from [Western Prelacy of the Armenian Church of America](http://www.westernprelacy.org) mailing list, please send email to: info@westernprelacy.org and asked to be removed.